ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

«09» դեկտեմբերի 2024թ. No 12/1-Գ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ**

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/25-Ա**

Մասնակից՝ **«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցե՝ ք. Երևան,Նալբանդյան փող 25/14, 76/

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տեսահսկման համակարգի սարքավորումների (համակարգչի կոշտ սկավառակ) ձեռքբերման նպատակով 12.11.2024թ. հայտարարվել է ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/25-Ա ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 27.11.2024թ.-ին կայացած նիստում արձանագրել է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ամբողջությամբ չի համապատասխանում ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/25-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին՝ ներկայացված փաստաթղթերը լրացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան. Բացակայում է ռուսերեն լեզվով անվանումը, Դիմում-Հայտարարությունը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չէ, բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և ապրանքի ամբողջական տեխնիկական բնութագիրը: «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն չի ներկայացրել շտկված փաստաթղթերը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետը հանձնաժողովը մերժել է «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

## 1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

12/9/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ